ՎԻԿՏՈՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ - 75

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՏԻՊԻՑ

## …ՆԱ ԾՆՎԵԼ, ՄԵԾԱՑԵԼ, ԿԱՅԱՑԵԼ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾԵԼ ՈՒ ՄԻՆՉԵՎ ԿՅԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՊԱՀՆ ԱՊՐԵԼ ԷՐ ԻՐ ՀԱՐԱԶԱՏ ՈՒ ԳԵՂԱՀՄԱ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻ ՀԵՃՏԻԱՅՈՒՄ



*Սեպտեմբերի 4-ին լրացավ վիրահայ բանաստեղծ Վիկտոր Հովսեփյանի 75-ամյակը: Մահից հետո այս էլ 27 տարի պարբերաբար Վրաստանում ու Հայաստանում տպագրվում են Վիկտոր Հովսեփյանի անտիպ ստեղծագործությունները, համալրում բանաստեղծի լուսեղեն ուղին, որտեղից հառնում է բանաստեղծական արվեստի բացառիկ դրսեւորումներից մեկը, որ սկիզբ առնելով Ջավախք աշխարհից, միանում է հայ գրականության լայնահուն հոսքին եւ իր անզուգական երանգով հաստատվում 20-րդ դարի վերջի գրական երկնակամարում:*

«Վրաստանի» լավագույն բարեկամներից էր Վիկտոր Հովսեփյանը: Նրա առաջին բանաստեղծությունը «Վրաստանում» է տպագրվել, վրաց դասական Տերենտի Գրանելուց արված վերջին թարգմանությունները նույնպես հասցեագրված էին «Վրաստանին», որոնք, ցավոք, չհասցրեց տպագրված տեսնել…

Այն, ինչ Վիկտորը չհասցրեց տպագրված տեսնել, Վիկտոր Հովսեփյանի ընտանիքի ջանքերով տպագրվում է ետմահու, լրացնում նրա բացական, նրա բերանով խոսում մեզ հետ: Ետմահու տպագրված ժողովածուներից մեկի («Երկխոսություն քնարերգության լեզվով») առաջաբանում բանաստեղծ, թարգմանիչ, Վրաստանի գրողների միության նախագահ Մաղվալա Գոնաշվիլին այսպես է բնութագրում Վիկտոր Հովսեփյանին. «…*Կարդա նրա բանաստեղծությունները՝ բանաստեղծի հոգու կենսագրությունը, հետո նրա դիմանկարին նայիր, նրա խոհուն հայացքից աչքդ մի կտրիր եւ այնպիսի զգացում կունենաս, ասես ողջ կյանքը միասին եք ապրել, ասես քեզ ու միայն քեզ է նա վստահել իր հոգու թախիծն ու բերկրանքը, միայն քեզ համար է բանաստեղծական տողերի վերածել խոհերը, որ զուլալվել, բյուրեղվել են իր հոգում… Հետո, երբ կկարդաս նրա բանաստեղծությունները, կզգաս, որ բանաստեղծի ասածը ճշմարտություն է, եւ այդ ճշմարտությունը դու ինքդ էլ վաղուց գիտեիր, պարզապես չես հասցրել ասել*»…

…Ու մեր չհասցրածը Վիկտորն է արել:

Ստորեւ ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում Վիկտոր Հովսեփյանի անտիպ բանաստեղծությունների մի փունջ:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

* * *

*Եկավ աշուն, եկավ*
*ոսկեծեռն էլի,*
*եղյամ պսակ հագավ*
*Աբուլ լեռն էլի:*

*Վերջին երգով վերջին*
*ծղրիդն է անտեսից*
*ներկում կրքով, ներկում*
*զով հեռուներն էլի:*

*Երգում լուսապսակ*
*է հագել սերն էլի,*
*մնում է՝ սերն ինքը*
*աշխարհին տեր լինի:*

*Անսիրության գալուստն*
*է հոգսիս բեռն էլի,*
*սիրո մահ չտեսած՝*
*գար մահս, մեռնեի:*

* * *

*Մահը ինքն է կարեւորը:*

*Մեր ամեն ապրած*
*մեր ամեն ապրած տեսածների պես*
*մահն էլ կդառնա անիմաստ մի բան*
*անիմաստ մի բան:*

*Կմնա սակայն*
*կմնա սակայն չգիտեմ ինչպես*
*ամբողջ կյանքն ինքը վերհուշի նման*
*վերհուշի նման:*

*Եղածի վերհուշ*
*եղածի վերհուշ հին շրջանակում*
*բայց ո՞վ կկախի նկարն այդ որտե՞ղ*
*նկարն այդ որտե՞ղ:*

*Փակում ենք կյանքը*
*փակում ենք կյանքը հանց գիրքն ենք փակում*
*եղած-չեղածին փակվող շիրմի պես*
*փակվող շիրմի պես:*

* * *

*Եվ ամեն մարդ երկնքի մեջ իր աստղն ունի,*
*եւ ամեն աստղ ցոլանքն է ինչ-որ մարդու,*
*ասուպվում է աստղը լայնքի մեջ անհունի,*
*հավերժական քուն է մտնում ինչ-որ արթուն:*

*Եվ ամեն աստղ ցոլանքն է ինչ-որ մարդու,*
*եւ աստղագետն ասում է՝ աստղը շա՜տ է մեծ,*
*եւ այս խոսքի հետ մի միտք է իմ մեջ զարթնում.*
*- Եթե ցոլքը մեծ է, բա ինքն ինչքա՜ն է մեծ:*

* * *

*Երեկ Եղիա Տեմիրճիպաշյանի չափ խմեցի*
*ու երջանիկ թող արեցի ճոխ սեղանն ու գնացի:*

*Այդ ապրողներն են մտածում, թե ում թողնեն ամեն ինչ,*
*մեռնողն ամեն բանից պոկվում՝ հանց կալանք ու շղթայից:*

*Երեկ Եղիա Տեմիրճիպաշյանի չափ խմեցի,*
*առավոտյան մահն հաճելի մի կատակ էր իմ աչքին:*

ԿՐԹԱԿԱՆ

# ՀԱՍՏԱՏՎԵՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ 2022-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

1. Հասարակության եւ պետության կարիքների վրա կենտրոնացած կրթության եւ գիտության որակյալ եւ կայուն համակարգի ապահովում:
2. Կրթության եւ գիտության հավասար, ներառական եւ բազմազան համակարգի ապահովում:
3. Կրթության եւ գիտության համակարգի կառավարման եւ հաշվետվողականության համակարգի ապահովում:

Մյուս կողմից, փաստաթուղթը սահմանում է 15 ռազմավարական նպատակ եւ 28 խնդիր՝ հիմնված ոլորտային առաջնահերթությունների վրա:

Ռազմավարությունը ներառում է նաեւ Եվրամիության, ՄԱԿ-ի, Համաշխարհային բանկի եւ Տնտեսական համագործակցության եւ զարգացման եվրոպական կազմակերպության մշակած առաջարկությունները՝ կրթության եւ գիտության ոլորտում բացահայտված մարտահրավերները հաղթահարելու համար:

Ինչ վերաբերում է ռազմավարությանը կից գործողությունների ծրագրին, ապա այն ներկայացնում է ժամանակային, կոնկրետ, համապատասխան նպատակաուղղված, ապացույցների վրա հիմնված գործողություններ՝ իրականացնելու առաջնահերթ ուղղությունները, նշելով պատասխանատու կողմերը եւ համապատասխան արդյունքների ցուցանիշները: Գործողությունների ծրագիրը կազմվում է եռամսյակային կտրվածքով եւ ներառում է համապատասխան բյուջեով հաստատված կատարման երեք տարի ժամկետ:

Միխեիլ Չխենկելու նախաձեռնությամբ՝ 2021 թվականին մեկնարկել են կրթության եւ գիտության 2022-2030 թվականների միասնական ազգային ռազմավարության մշակման աշխատանքները: Փաստաթուղթը մշակվել է «Աջակցություն՝ Վրաստանում պետական կառավարման բարեփոխումներին (ՊՏՀ)» ծրագրի աջակցությամբ, Համաշխարհային բանկի «Նորարարության, ներառման եւ որակի նախագիծ-Վրաստան I2Q (IBRD)» ծրագրի աջակցությամբ, UNDP Georgia-ի փորձագետների եւ Եվրամիության Skillsforjobs ծրագրի աջակցությամբ եւ հաստատվել է Վրաստանի կառավարության՝ «քաղաքական փաստաթղթերի մշակման, մոնիտորինգի եւ գնահատման կանոնների» համաձայն:

Քաղաքականության մշակման թափանցիկությունն ապահովելու եւ քաղաքացիներին, հասարակությանը եւ շահագրգիռ կողմերին ներգրավելու նպատակով, Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը առցանց ձեւաչափով անցկացրել է հանրային խորհրդակցություններ, որոնց հիման վրա մշակվել է ռազմավարության եւ գործողությունների ծրագրի վերջնական տարբերակը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

# «ՈՒՐԱԽՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆ» ԳԻՎԻ ՍԻԽԱՐՈՒԼԻՁԵԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԻՆ ՀՆՉԵՑ ՆԱԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԸ

*Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանի ցուցասրահում անցկացվեց վրաց հանրաճանաչ դերասան Գիվի Սիխարուլիձեի ստեղծագործական երեկոն: Երեկոն բացեց Գիվի Սիխարուլիձեի նոր գրքի՝ «Մասնատված կյանք» ժողովածուի խմբագիր Վախտանգ Ղլոնտին:*



Միջոցառմանը ելույթ ունեցողները մանրամասն խոսեցին Գիվի Սիխարուլիձեի՝ գրող, բանաստեղծ, հումորիստ եւ դերասանի մասին:

Ստեղծագործական երեկոյին Գիվի Սիխարուլիձեն հանդես եկավ բանաստեղծությունների ընթերցմամբ, նաեւ երգչուհի Էռնա Ցիփուրիայի հետ՝ հայկական «Ազգ իմ փառապանծ» երգի (երաժշ.՝ Առնո Բաբաջանյանի, խոսքը՝ Աշոտ Գրաշի) կատարմամբ:

Նշենք, որ Գիվի Սիխարուլիձեն բարեկամական սերտ հարաբերություններ ունի հայ ժամանակակից գրողների, դերասանների հետ: Հայ հանդիսատեսը միշտ բարձր է գնահատել Գիվի Սիխարուլիձեի դերասանական արվեստը, իսկ ընթերցողները՝ նրա գրչով ծնված ստեղծագործությունները: Մասնավորապես, վերջերս Թբիլիսիում, «Հովհաննես Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնում անցկացվեց Գիվի Սիխարուլիձեի «Յամուր» վեպի հայերեն թարգմանության շնորհանդեսը: Գիրքը հայ ընթերցողներին է ներկայացվել Մկրտիչ Գրաբսկու թարգմանությամբ:

ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ

# ՀԱՅ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԵՆԱԹԱՐՄ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՐԱՑԵՐԵՆ



Արմեն Հայաստանցի

*Հայ ժամանակակից գրողների մի շարք ստեղծագործություններ վերջին շրջանում ներկայացվում են նաեւ վրացերենով: Ամենաթարմ թարգմանությունն Արմեն Հայաստանցու (Օհանյան) ստեղծագործություններից «ՊոչԱՏՈւՄ»-ն է, որը հրապարակվել է վրաստանյան հասարակական-գրական ամսագրերից մեկում:*

- Վերջին տասնամյակներում որոշակի օտարացում կա, եթե Խորհրդային Միության ժամանակ այդ հարցը լուծված էր, ազգային լեզուներով էլ էր երկխոսությունը շատ ինտենսիվ տեղի ունենում, հիմա կարծես այդ ամենը քանդվել է, երբեմն անտեսում ենք մեր հարեւաններին, սակայն ինձ համար՝ որպես հեղինակի, շատ կարեւոր է, որ մեզ ճանաչեն նաեւ հարեւան երկրներում եւ գրականության միջոցով էլ այդ երկխոսությունը կայանա, օտարումը հաղթահարվի,- ասում է արձակագիր, հրապարակախոս, գրական թարգմանիչ, 2017-ից Հայաստանի ՓԵՆ կենտրոնի նախագահ Արմեն Հայաստանցին:

Հայ հեղինակների ստեղծագործությունների թարգմանությունների նախաձեռնությունը արեւելագետ, վրաց լեզվի դասախոս, թարգմանիչ, ծնունդով թբիլիսցի Ասյա Դարբինյանինն է:

«Ալիք մեդիայի» հետ զրույցում Ասյան ասաց, որ ժամանակ առ ժամանակ թարգմանում է ոչ միայն հայ եւ վրաց գրականության հայտնի ստեղծագործությունները, այլ նաեւ ժամանակակից գրողների աշխատանքներն ու այդ կերպ նրանց ներկայացնում վրաց եւ հայ հանրությանը:

*ԳՈՀԱՐ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*

*«Ալիք մեդիա», հատուկ «Վրաստանի» համար*

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

## ԱՍԱՏՈՒՐ ՍԱՐԱՖՅԱՆԸ (ՕՍԿԱՐ ԲԵՆՔԵՐԸ)՝ ՄԵՔԵՆԱՅԻ ԱՎՏՈՄԱՏ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՏՈՒՓԻ ՀԵՂԻՆԱԿ



***Վերջերս իմացա, որ մեքենայի ավտոմատ փոխանցման տուփի հեղինակությունը վերագրվում է հայազգի գյուտարարի: Ցավոք, մանրամասներ չկարողացա իմանալ: Որքանո՞վ է այդ տեղեկատվությունը համապատասխանում իրականությանը:***

***Ս.Մուրադյան***

***Թբիլիսի***

Ձեր նշած տեղեկությունը համապատասխանում է իրականությանը: Իրոք, ավտոմատ փոխանցման տուփի գյուտարարը հայ է՝ Ասատուր Սարաֆյանը, նույն ինքը՝ Օսկար Բենքերը: Ասատուրը ծնվել է 1895թ. Արեւմտյան Հայաստանում: Պատանեկության տարիներին Ասատուրը տեղափոխվում է օվկիանոսից այն կողմ եւ հաստատվում ԱՄՆ-ի այն ժամանակների արդյունաբերական կենտրոնում՝ Չիկագոյում: ԱՄՆ-ում նա փոխում է իր անունը եւ ազգանունը, դառնալով՝ Օսկար Բենքեր: Ասատուրը աշխատանքի է անցնում գործիքների խանութում, որտեղ նա նախագծում է սղոցներ սրելու գործիքը: Միաժամանակ նա սկսում է նախագծել այլ կարեւոր իրեր, որոնցից ամենահայտնին մեքենաների ավտոմատ փոխանցման տուփն էր: Օսկարը այն ստեղծում է տարիների քրտնաջան աշխատանքի արդյունքում՝ 8 տարի, որը 1940թ. ներդրվում է «General Motors»-ի հայտնի «Oldsmobile Hydramatik» փոխանցման տուփի հիմքում: Նույն Բենքեր-Սարաֆյանին են պատկանում ավտոսիրողներին քաջ հայտնի բենզինի պոմպի (արտոնագրված 1961թ.-ին), ինչպես նաեւ շարժիչի յուղի չափիչի (արտոնագրված 1957թ.-ին) գյուտերը: Ասատուր Սարաֆյան-Բենքերի ամենաարժեքավոր հայտնագործություններ են համարվել ուղղաթիռի տրանսմիսիայի՝ Սիկորսկու շարժիչի փոխանցման տուփը (արտոնագրված 1949թ.-ին) եւ գունավոր տպագրության սարքը (արտոնագրված 1932թ.-ին): Օսկար Բենկերը մահացել է Քլիվլենդում 1979թ., 83 տարեկան հասակում: Պարծենում ենք մեր ազգի ներկայացուցիչներով:

ԽՈՐՀՈՒՐԴ

## ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՎԱԾ ՍՆՆԴԻ 10 ԿԱՆՈՆ

***Այն, որ մարդու առողջությունը մեծապես պայմանավորված է սննդի բովանդակությամբ եւ որակով, հայտնի փաստ է, սակայն գիտականորեն մշակվե՞լ են, արդյոք, լավ, առողջարար սննդի կանոններ, որոնք կարող են հստակություն բերել այդ հարցում:***



***Գ.Գեւորգյան***

***Բոլնիսի***

*Նման կանոններ գոյություն ունեն: Գիտականորեն մշակվել են հավասարակշռված սննդի տասը խորհուրդներ, որոնք էլ ներկայացնում ենք ձեր ուշադրությանը:*

1.Կերեք, որքան անհրաժեշտ է: Մարդու օրական սնունդը պետք է պարունակի այնքան կալորիա, որքան ծախսում է օրվա ընթացքում: Ավելորդ կալորիաներից կարելի է գիրանալ, իսկ ժամանակակից մարդը քիչ է շարժվում:

2.Սնվեք լիարժեք: Ածխաջրերի, ճարպերի ու սպիտակուցների օրական չափաքանակը պետք է լինի 4:1:1: Դա կարելի է բաշխել հետեւյալ կերպ. ափսեն բաժանել 3 մասի, որի 2 մասը պետք է լինեն ածխաջրեր, իսկ 1 մասը՝ սպիտակուցներն ու ճարպերը:

3.Սնվել հաճախ: Չգիրանալու համար պետք է ուտել քիչ-քիչ ու հաճախ՝ օրվա ընթացքում 5-6 անգամ:

4.Պահպանեք բնականոն քաշ: Բնականոն քաշի դեպքում կարելի է ուտել ամեն ինչ՝ հարստացնելով սնունդը, իսկ դա առողջության գրավականն է:

5.Բազմազանություն մտցրեք սննդակարգի մեջ: Ներառեք մրգեր, բանջարեղեն, կանաչեղեն, միս, ձուկ, կաթնամթերք, ընդեղեն, մակարոնեղեն, հատապտուղներ:

6.Սահմանափակեք ճարպերը: Բուսայուղերը, ձկան յուղը պարունակում են վիտամիններ եւ անփոխարինելի ճարպաթթուներ: Սակայն ճարպերի ավելցուկը կարող է նպաստել աթերոսկլերոզի եւ սրտի իշեմիկ հիվանդության առաջացման:

7.Պակասեցրեք շաքարը, որը վնասում է ատամները եւ հանգեցնում ավելորդ քաշի:

8.Զգուշացեք աղից: Աղի ավելցուկն օրգանիզմում բարձրացնում է արյան ճնշումը:

9.Կերեք անմարսելի սնունդ: Անմարսելի սննդային մանրաթելերը կարգավորում են մարսողությունը:

10.Ալկոհոլը սնունդ չէ: Առողջության համար անվնաս է օրական մինչեւ 20 գ մաքուր սպիրտը: Դա կազմում է մոտ 50-60 գ թունդ ըմպելիք կամ 150-200 գ գինի կամ մինչեւ 500 գ գարեջուր: Դրանից ավելին թունավորում է օրգանիզմը:

ՀՐԱՏԱՊ

## ԻՆՉՊԵՍ ՄԵՂՄԵԼ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ՝ ԵՐԵԽԱՅԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԹՈՂԱԾ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ նախորդ համարում)

**Ինչպե՞ս է համավարակն ազդել երեխաների հոգեկան առողջության վրա:**

Առավել կարեւոր է հոգեբանական սթրեսի մեջ լինելը հոգեկան առողջության խնդիր ունենալու հետ չշփոթելն է: Համավարակը սթրեսի է ենթարկել բոլորին, եւ վերջին երկու տարիների պատճառով նեղված լինելը բնական է: Եթե ձեր երեխան արտասվում է, քանի որ շատ բան է բաց թողել կամ դժվարություններ ունի, դա միանգամայն ճիշտ արձագանք է ճիշտ ժամանակին: Արտասվելն օգնում է նրան արդյունավետորեն հաղթահարել այդ զգացմունքները: Ձեր սերը, մխիթարանքն ու աջակցությունը եւս կօգնի:

Այլ բան, եթե առկա է հոգեկան առողջության խնդիր, եւ երեխան չի կարողանում հաղթահարել զգացմունքները, հարմարվել նոր իրականությանն ու չվնասել ինքն իրեն: Եթե նա տխուր է այս ամենի պատճառով, չի կարողանում ստանալ կամ գտնել միջոցներ, որ կօգնեն իրեն բարելավելու ինքնազգացողությունը, անում է այնպիսի բաներ, որոնք վնասակար են ուրիշների կամ հենց իր համար, կամ այնքան է տխրում, որ դա սկսում է խանգարել նրան հաճույք ստանալու այլ բաներից կամ մատնում է հուսահատության, ապա հարկավոր է դա դիտարկել՝ որպես հոգեկան առողջության խնդիր, եւ ապահովել երեխայի համար անհրաժեշտ մասնագիտական աջակցություն:

**Ինչպիսի՞ երկարաժամկետ հետեւանքներ կարող է համավարակը թողնել երեխաների հոգեկան առողջության վրա: Ի՞նչ կարող են անել ծնողները դրանք մեղմելու համար:**

Կարծում եմ՝ հետեւանքներից մեկը, որ պետք է փորձենք կանխել, դա երեխաների չափազանց զգուշավոր կամ մեկուսացած դառնալն է: Ցանկալի չէ, որ նրանք շարունակեն խիստ կաշկանդված լինել, երբ դա այլեւս անհրաժեշտ չէ, քանի որ դա նրանց կզրկի կյանքի բազմազանությունից, ինչը նպաստում է նրանց զարգացմանն ու բարեկեցությանը:

Հարկավոր է ուշադրություն դարձնել նաեւ կրթական բացթողումներին: Դրանց պետք է լուծում տրվի, իսկ բաց թողած ուսումնական կարիքները պետք է լրացվեն: Ես անհանգստանում եմ, որ կան երեխաներ, որոնց ուսումնական կյանքը շեղվել է բնականոն ուղուց, եւ որոնք սոցիալական, հուզական եւ կրթական աջակցության կարիք ունեն՝ խելամիտ տեմպերով իրենց ուսումնառության բացթողումները վերականգնելու համար:

Այս հետեւանքները կանխելու առաջին միջոցը երեխաների շարունակական քաջալերումն է ու վստահության ներշնչումը:

Ինչ վերաբերում է կրթական մարտահրավերներին, ապա անելու շատ բան կա՝ հասկանալու, թե յուրաքանչյուր երեխա ինչ է ստացել եւ ինչ չի ստացել դպրոցում, քանի որ յուրացրածի ընդգրկումը՝ նույնիսկ մեկ դասարանում, շատ տարբեր է: Շատ երեխաներ իսկապես դժվարությամբ էին սովորում համավարակի ընթացքում, նույնիսկ նրանք, ովքեր, ի տարբերություն մյուսների, առցանց ուսուցման հնարավորություն ունեին:

Ուստի առաջիկայում հարկավոր է պարզել, թե երեխաներն ինչ են սովորել եւ ինչ չեն սովորել, եւ գտնել ուղիներ՝ լրացնելու բացթողումները, որպեսզի համավարակի ժամանակ բաց թողած բովանդակության պատճառով չխոչընդոտվի նրանց հետագա ուսումնական առաջընթացը:

**Իսկ ի՞նչ անել, եթե ծնողն է համավարակի արդյունքում առավել զգուշավոր դարձել:**

Կարծում եմ՝ պետք է խոստովանենք, որ ծնողների գործն էլ է մի քիչ բարդացել: Մինչ համավարակը երեխաները տարիքի հետ աստիճանաբար անկախություն են ձեռք բերել: Համավարակի, լոքդաունների, տանը սովորելու եւ տնից աշխատելու արդյունքում ծնողներն այժմ սովոր են, որ իրենց երեխաները մշտապես իրենց կողքին են: Հեշտ չէ այս ամենից հետո, երեխային միանգամից «բաց թողնել»: Սակայն հարկավոր է օգնել երեխաներին իրենց տարիքին համապատասխան անկախություն ձեռք բերել եւ ինքնաբավ լինել:

Քանի որ այդ գործընթացը հեշտ չէ, դուք նույնպես աջակցության կարիք կունենաք: Կարող եք ձեր երեխայի տարիքի երեխաներ ունեցող այլ ծնողների հետ զրուցել: Պարզել, թե նրանց 10-ամյա, 13-ամյա կամ 16-ամյա երեխան որքան անկախություն ունի տանը կամ շրջապատում: Եվ հիշե՛ք, երբ ծնողը վստահ է, որ երեխան կարող է ինքնուրույն գլուխ հանել, դա ամրապնդում է երեխայի ինքնավստահ եւ ինքնաբավ լինելու զգացումը:

## ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

*☺ 80-ամյա ծերունին գալիս է բժշկի մոտ.*

*- Բժիշկ, պատրաստվում եմ ամուսնանալ:*

*- Իսկ քանի՞ տարեկան է հարսնացուն:*

*- Տասնութ:*

*Այդ դեպքում պիտի զգուշացնեմ ձեզ, սեռական ակտիվությունը կարող է բերել մահվան...*

*- Դե, ի՜նչ արած,- հոգոց է հանում ծերունին:- Եթե նրա ճակատին գրած է, որ ջահել է մեռնելու...*

*☺ Երեկ տեսա քեզ մի կնոջ հետ՝ շատ հետաքրքիր հանգամանքներում:*

*- Դա իմ օրինական կինն էր:*

*- Փա՜ռք Աստծո: Թե չէ խղճացի քեզ: Մտածեցի՝ ախր այդ ինչ հրեշ է կինդ, որ պատրաստ ես քարշ գալ այդպիսի անճոռնու հետ:*

*☺ Ամուսինը երկար պրպտում է գրպանները, հետո էլ՝ վշտացած ասում կնոջը.*

*- Դրամապանակս չեմ գտնում:*

*- Շալվարիդ գրպանում նայե՞լ ես:*

*- Այո:*

*- Իսկ վերարկուի՞դ:*

*- Այո:*

*- Իսկ ծոցագրպանո՞ւմ:*

*- Ոչ:*

*- Ինչո՞ւ:*

*- Եթե այնտեղ էլ չլինի, ինձ ինֆարկտ կխփի:*

*☺ Մի մարդ վազում է ոստիկանի մոտ.*

*- Հենց նոր այն անկյունում խլեցին ժամացույցս:*

*- Իսկ ինչո՞ւ օգնության չկանչեցիք:*

*- Վախեցա բերանս բացել: Ատամներս ոսկուց են:*

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

☞ Մարդն իր բնույթով հասարակական էակ է:

***ԱՐԻՍՏՈՏԵԼ***

☞ Մարդը չի կարող ապրել մենության մեջ, նրան հարկավոր է հասարակություն:

***ԳՅՈԹԵ***

☞ Անկեղծությունը ճշմարտություն չէ:

***ԼԱՎԵՐ***

☞ Մարդ ինչքան խելացի է, այնքան շատ է գտնում օրիգինալ մարդկանց: Միջակ անհատները տարբերություն չեն գտնում մարդկանց միջեւ:

***ՊԱՍԿԱԼ***

☞ Ուրիշների անկատարելությունը հանդուրժել կարողանալը բարձրագույն արժանիքի նշան է:

***ՎԻՆՔԼԵՐ***



☞ Բոլոր հարաբերություններում մարդը մարդուն անհրաժեշտ է:

***ՇԵՎՉԵՆԿՈ***

☞ Մենք հաճախ ներողամիտ ենք վերաբերում նրանց, ովքեր բեռ են մեզ վրա, բայց մենք երբեք ներողամիտ չենք լինում նրանց նկատմամբ, ովքեր նեղվում են մեզանից:

***ԼԱՐՈՇՖՈՒԿՈ***

☞ Ոմանց հետ խոսելիս, ժամանակ ես կորցնում, իսկ ոմանց հետ էլ՝ ժամանակի հասկացությունը:

***Հ.Պետրոսյան***
***«Վրաստանի» ընթերցող***
***Մառնեուլի***

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ 7-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ




*Սեպտեմբերի 7-ին, աշխատանքային այցով, Ռուսաստանում գտնվող Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Վլադիվոստոկում մասնակցեց «Բազմաբեւեռ աշխարհի ճանապարհին» թեմայով Արեւելյան տնտեսական 7-րդ համաժողովի լիագումար նստաշրջանին:*

Պարզաբանելով, թե ինչ կապ ունի Հայաստանը Արեւելյան տնտեսական 7-րդ համաժողովի եւ Հեռավոր Արեւելքի հետ, Հայաստանի վարչապետը նշեց, որ լոգիստիկ սխեմաները դրամատիկ կերպով փոխվում են:

- Եթե նայենք քարտեզին, մենք կարող ենք տեսնել ու նկատել այն հնարավորությունները, որոնք բացվել են եւ բացվելու են Հայաստանի համար եւս: Հակառակ ամեն ինչի, Արեւելքից Արեւմուտք, Արեւմուտքից Արեւելք ապրանքների ներհոսքը չեն դադարի, Հյուսիսից Հարավ եւ Հարավից Հյուսիս՝ եւս: Եվ եթե քարտեզին նայենք, ակնհայտ է, որ Հայաստանը գտնվում է այդ ուղիների խաչմերուկում եւ մենք, կարծում ենք, որ այստեղ իսկապես հնարավորություն կա, որը պետք է օգտագործենք,- հայտարարեց Հայաստանի վարչապետը եւ հիշեցրեց, որ այս պահին Հայաստանում իրականացվում է Հյուսիս-Հարավ նախագիծը:

- Դա նոր ավտոմոբիլային ճանապարհի կառուցումն է, որը կապում է մեր հարավային հարեւան Իրանին հյուսիսային հարեւան Վրաստանի հետ,- ասաց վարչապետը:

Ելույթ ունենալով համաժողովում, Նիկոլ Փաշինյանը նախ շնորհակալություն հայտնեց Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինին՝ Արեւելյան տնտեսական 7-րդ համաժողովի լիագումար նստաշրջանին հրավիրելու համար, որը, ըստ Փաշինյանի, արդյունավետ հարթակ է հարցերի լայն շրջանակի շուրջ մտքերի եւ գաղափարների փոխանակման համար:

- Գիտեք, որ 2020 թվականին մենք պատերազմ ենք վերապրել, եւ իրավիճակը նման էր նրանով, որ այն ժամանակ, երբ Ադրբեջանը սկսել էր պատերազմը, միջազգային հանրության, այդ թվում՝ Ռուսաստանի ամբողջ ուշադրությունը կենտրոնացված էր կորոնավիրուսային համավարակի հետ կապված խնդիրների վրա: Սակայն հուսով ենք, որ Ռուսաստանի, այդ թվում՝ մեր այլ գործընկերների հետ սերտ համագործակցության շնորհիվ կկարողանանք տարածաշրջանային իրավիճակը կառավարել եւ պահել վերահսկողության տակ, որը շատ կարեւոր է նաեւ գլոբալ անվտանգության համար,- եզրափակեց Փաշինյանը:

Սեպտեմբերի 7-ին, Վլադիվոստոկում անցկացվող «Բազմաբեւեռ աշխարհի ճանապարհին» թեմայով Արեւելյան տնտեսական 7-րդ համաժողովի շրջանակում, տեղի ունեցավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հանդիպումը:

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԱՅՍՕՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԲՈՂՋ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԻՆ ԼԱՐՍԻՑ Է ԿԱԽՎԱԾ»

*Վլադիվոստոկ այցի շրջանակներում՝ Նիկոլ Փաշինյանը հանդիպեց տեղի հայկական համայնքի ներկայացուցիչների հետ:*

Հանդիպմանը Հայաստանի վարչապետը՝ անդրադառնալով հարցին, թե որքանով տարածաշրջանային կոմունիկացիաների բացումը կարող է սպառնալիք լինել Հայաստանի, մասնավորապես, Սյունիքի մարզի համար, նշեց, որ Հայաստանի տարածքով որեւէ մեկին միջանցք չի տրվի:

- Ճանապարհի բացումը ոչ մի սպառնալիք Հայաստանի եւ Սյունիքի մարզի համար չի ստեղծում, ընդհակառակը, դա կբերի անվտանգության եւ կայունության լրացուցիչ երաշխիքներ, այլ բան, որ ադրբեջանական խոսույթի մեջ երբեմն մտնում են արտահայտություններ, որոնք բացահայտում են որոշակի վտանգներ: Օրինակ, խոսում են միջանցքի մասին: Ես ուզում եմ շատ հստակ լինի, որ մենք Հայաստանի տարածքով որեւէ միջանցք որեւէ մեկին չենք տալու: Բայց մենք ճանապարհ տալու ենք, բացելու ենք եւ պատրաստ ենք դա անել ցանկացած պահի,- նշեց ՀՀ վարչապետը:

Վարչապետն ընդգծեց, որ այսօր Հայաստանի ամբողջ տնտեսությունը Վերին Լարսի ճանապարհից է կախված, իսկ այսօր այդ ճանապարհն ավելի ծանրաբեռնված է, քանի որ Ուկրաինայի իրավիճակով պայմանավորված նախկինում Սեւ ծովով իրականացված բեռնափոխադրումների մի մասը իրականացվում է այդ հատվածով:

Նիկոլ Փաշինյանը հավելեց, որ շատ կցանկանա, որպեսզի տարածաշրջանային կոմունիկացիաները բացվեն, ինչը, ըստ վարչապետի, անհնար չէ:

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ ՀԱՍՆՎԵԾ 31 600 ԴՐԱՄԻ

*Հայաստանի կառավարությունը համապատասխան որոշմամբ, նվազագույն կենսաթոշակի չափը բարձրացրեց՝ սահմանելով 31 հազար 600 դրամ. սա թույլ կտա ապահովել, որ Հայաստանում բացառապես բոլորի թոշակները առնվազն 3000 դրամով բարձրանան:*

Սեպտեմբերի 8-ին Հայաստանի կառավարության նիստում նշվեց, որ սեպտեմբերի 1-ից բազային կենսաթոշակի չափը սահմանվեց 21 հազար դրամ՝ 18 հազար դրամի փոխարեն: Իսկ նվազագույն կենսաթոշակի չափը 28 հազար 600 դրամի փոխարեն սահմանվեց 30 հազար 500 դրամ: Գործող բանաձեւով եւ օրենքով՝ կենսաթոշակառուների որոշակի խումբ ավելի քիչ էր ստանում, քան 3000 դրամը, եւ մենք որոշեցինք բարձրացնել՝ նվազագույն կենսաթոշակի չափը հասցնելով 31 հազար 600 դրամի, որը կերաշխավորի, որ բոլոր կենսաթոշակառուները ստանան մեր խոստացած 3000 դրամը: Նախագծի ընդունման արդյունքում՝ 16 հազար 600 կենսաթոշակառուների եւ 5186 զինկենսաթոշակառուների ու շուրջ 75 հազար նպաստառուների համար սեպտեմբերի 1-ից կավելանան կենսաթոշակն ու նպաստները:

Այսինքն, այն խումբը, որոնց թոշակը մինչեւ այս որոշումը սահմանված օրենքով եւ բանաձեւով բարձրացել էր 1900 կամ 2500 դրամով, հոկտեմբերի կենսաթոշակի հետ կստանա մնացած հատվածը:

Իսկ ինչ վերաբերում է 75 հազար նպաստառուներին՝ ծերության նպաստ ստացողներին, ապա, որոնց մոտ բարձրացումը տեղի է ունենում ոչ թե Կենսաթոշակառուների մասին օրենքով, այլ Նպաստառուների մասին օրենքով:

## ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿԱՆՑԿԱՑՎԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

*Երեւանում հոկտեմբերի 28-31-ին կանցկացվի Համաշխարհային հայկական գագաթաժողով. այն կազմակերպվում է Հայաստանի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կողմից:*




Գագաթաժողովի օրակարգում կընդգրկվեն այնպիսի թեմաներ, ինչպիսիք են ազգային անվտանգությունը, հայկական շահերի պաշտպանությունը, հայրենիքի ռազմավարական ոլորտների զարգացումը, հայրենադարձությունը, ներդրումային ներգրավվածությունը, հայապահպանությունը, սփյուռքի ինքնակազմակերպումը եւ այլն:

Գագաթաժողովը կունենա շուրջ 600 մասնակից՝ 40-ից ավելի երկրներից, ինչպես նաեւ Հայաստանից ու Արցախից, որոնք կներկայացնեն համայնքային կառույցներ, կազմակերպություններ, գիտական, մասնագիտական, գործարար, ուսանողական, երիտասարդական շրջանակներ եւ այլն:

Գագաթաժողովն աշխատանքային երեք օրերի ընթացքում կունենա 8 պանելային քննարկում, համաժամանակյա 17 նիստ, ազատ ձեւաչափով 2 հանդիպում: Որպես բանախոսներ հանդես կգան սփյուռքի համայնքներից ժամանած հայտնի սփյուռքահայեր, փորձագետներ, համայնքային գործիչներ, գիտնականներ, ինչպես նաեւ հայաստանյան շրջանակների ներկայացուցիչներ:

Գագաթաժողովի ընթացքում հնչեցված առաջարկները, լուծումներն ու արդյունքները կդառնան համահայկական օրակարգի ստեղծման եւ առաջմղման հիմնաքարերը: Այսպիսով, հայրենիքն ու սփյուռքը միասին կնախանշեն հետագա համատեղ աշխատանքի առաջնահերթություններն ու ճանապարհները:

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը բաց է գագաթաժողովին վերաբերող առաջարկների ու քննարկումների համար:

### ԱՐԱՄ ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ՝ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ



***Սեպտեմբերի 6-ին Գերմանիայի Կառլսրուէ քաղաքում գումարվող եկեղեցիների համաշխարհային խորհրդի 11-րդ համաժողովը Մեծի Տանն Կիլիկիո Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսին ընտրել է խորհրդի նախագահ՝ ներկայացնելով արեւելեան ուղղափառ եկեղեցիները:***

***Այդ մասին հաղորդագրություն է տարածել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը: «Յայտնենք, որ Վեհափառ Հայրապետը երկու շրջան (1991-1998 եւ 1998-2006) ընտրուած էր Ե.Հ.Խ.-ի կեդրոնական ու գործադիր վարչութեանց ատենապետ: Արդարեւ, ընդառաջելով միջ-եկեղեցական անձնաւորութիւններու ու շրջանակներու ջերմ փափաքին, ինչպէս նաեւ միջ-եկեղեցական շարժումին նոր մղում մը տալու հեռանկարով, Նորին Սրբութիւնը ընդառաջեց նախագահ դառնալու անոնց փափաքին»,- ասվում է հաղորդագրության մեջ:***

### ԾՐԱԳՐՎՈՒՄ Է 7 ՏՈԿՈՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

***Հայաստանի տնտեսությունում դրական դինամիկա է արձանագրվել:***

***Արեւելյան տնտեսական 7-րդ համաժողովի լիագումար նստաշրջանի ժամանակ իր ելույթում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշեց, որ այս տարի միտված են առնվազն 7 տոկոս տնտեսական աճ ունենալ:***

***- Եվ այս կոնտեքստում ուզում եմ ընդգծել, որ Եվրասիական տնտեսական միությունը մեր երկրի համար արդարացրել է իրեն այս կոնկրետ իրավիճակում եւս, որովհետեւ այն տնտեսական աճը, որը նախատեսված է, կապված է այն ազատությունների հետ, որոնք ապահովում է Եվրասիական տնտեսական միությունը: Ես նկատի ունեմ ապրանքների, ծառայությունների, կապիտալի, աշխատուժի ազատ տեղաշարժը. մենք դա տեսնում ենք: Իհարկե, պետք է այստեղ աշխատել հաջորդ փուլի վրա, որպեսզի այդ դինամիկան կարողանանք պահել, որպեսզի մեզ մոտ այդպիսի տնտեսական աճից հետո չառաջանա նոր տնտեսական ճգնաժամ,- հայտարարեց Նիկոլ Փաշինյանը:***

### ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ՆՈՐ ԳԻԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՄԻՋԵՎ

***Իրանի Արեւելյան Ադրբեջան նահանգում, էլեկտրաէներգիայի հետ կապված ավելի քան 2000 նախագծերի շրջանակներում, բացվել է դեպի Հայաստան էլեկտրահաղորդման նոր գիծ: Մեղրի էլեկտրահաղորդման 90 կիլոմետրանոց գիծը կարող է 400 կիլովատ էլեկտրաէներգիա արտահանել Հայաստան:***

### COVID-19. ՄԵԿ ՇԱԲԱԹՈՒՄ ԳՐԱՆՑՎԵԼ Է 2329 ԴԵՊՔ, ՄԱՀԱՑԵԼ Է 7 ՄԱՐԴ

***Հայաստանի առողջապահության նախարարության տեղեկատվությամբ, Հայաստանում, օգոստոսի 29-ից սեպտեմբերի 4-ն ընկած ժամանակահատվածում, հաստատվել է կորոնավիրուսային հիվանդության 2329 դեպք:***

***Դեպքերի ընդհանուր թիվը հասել է 436 հազար 727-ի, որից 423 հազար 329-ը՝ առողջացման, 8662-ը՝ մահվան ելքով:***

***Վերջին մեկ շաբաթվա ընթացքում առողջացել է 243 քաղաքացի, մահացել է 7 մարդ: Կորոնավիրուսային հիվանդությունից այս պահին փաստացի բուժում է ստանում 3016 բուժառու: Մեկ շաբաթում կատարվել է 6 հազար 736 թեստավորում: Թեստավորումների ընդհանուր թիվը հասել է 3 միլիոն 191 հազար 200-ի:***

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՍԵՊՏԵՄԲԵՐ

*11.09.2022 Խաչվերաց*



Խաչվերացը Հայ եկեղեցու հինգ տաղավար տոներից վերջինն է: Այն Խաչին նվիրված տոներից ամենակարեւորն է, որովհետեւ նվիրված է գերությունից խաչի վերադարձի եւ փառաբանության հիշատակին: Հայաստանյայց եկեղեցում Խաչվերացը տոնում են սեպտեմբերի 11-17-ն ընկած ժամանակահատվածում հանդիպող կիրակի օրը: Սուրբ Խաչը տոնվում է ի հիշատակ Տիրոջ խաչափայտի՝ պարսկական գերությունից Երուսաղեմ վերադարձի եւ Գողգոթայում կանգնեցման (վերացման): Այստեղից էլ տոնը կոչվում է Խաչվերաց:

Խաչվերացի տոնը մեզ համար, նախեւառաջ, հարությամբ նորոգվելու խորհուրդն ունի:

Ընդհանուր առմամբ՝ Խաչվերացը կամ «Սըրբխեչը» աշնան սկիզբը խորհրդանշող ուրախ տոն է: Տոնի նախօրեին՝ շաբաթ օրը կանայք խմորեղեն են պատրաստում, տղամարդիկ՝ ուլ մորթում ու «գորովի» պատրաստում: Ժողովրդական ավանդության համաձայն, ուլի միսը եւ ձավարով փլավն այդ օրվա առանձնահատուկ ուտելիքն է, առանց որի տոնը լիարժեք չի կարող լինել:

Խաչվերացի հաջորդ օրը մեռելոց է: Այդ օրը եկեղեցիներում մատուցվում է Սուրբ պատարագ, կատարվում է հոգեհանգստյան կարգ, որից հետո այցելում են հանգուցյալների շիրիմներին:

ԹԵԺ ԳԻԾ

## ԲՈԼՈՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐ

*Շտապ բժշկական օգնություն* - **112**
*Պարեկային ոստիկանություն* - **112**
*Հրշեջ-փրկարար ծառայություն* - **112**
*Պահակային ոստիկանություն* - **125**
*Գլխավոր տեսչություն* - **126**
*Տեղեկատու բյուրո* - **118 08**
*Քաղաքապետարանի թեժ գիծ* - **272-22-22**
*Առողջապահության նախարարության թեժ գիծ* - **15-05**
*Ժողովրդական պաշտպան* - **299-58-98, 292-24-79**
*Մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն* - **1481**
*«Թբիլիսի էներջի»-ի տեղեկատվական ծառայություն* - **114, 240-40-04**
*«Վարկեթիլաիրի»-ի տեղեկատվական ծառայություն* - **227-50-40**
*ԹԵԼՄԻԿՈ-ի թեժ գիծ* - **16 700, (+995 32) 5 000 777**
*Ջրամատակարարման թեժ գիծ* - **293-11-11**
*Կոյուղու վթարային ծառայության թեժ գիծ* - **(593) 50-42-52**
*Օդանավակայանի տեղեկատվական բյուրո* - **231-03-41, 231-04-21**
*Երկաթուղային կայարան* - **1331, 2199010**
*Դիդուբեի «Օկրիբա» ավտոկայարան* - **(599) 74-73-73**

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՏԵՐ ՆԱՐԵԿ ՂՈՒՇՉՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՓԱՐԻԶԻ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎԻՎ



Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի հրամանագրով, Վիրահայոց թեմում ծառայող Տ. Նարեկ քահանա Ղուշչյանն իր հոգեւոր ծառայությունն այսուհետ կշարունակի Ֆրանսիայում՝ Փարիզի Սուրբ Հովհաննես Մկրտիչ առաջնորդանիստ եկեղեցում: 120-ամյա պատմություն ունեցող տաճարը գտնվում է Փարիզի հենց սրտում՝ Շանզ Էլիզեից ընդամենը 200 մետր հեռավորությամբ, կառուցման բարերարը թբիլիսցի հռչակավոր մեծահարուստ եւ մեկենաս Ալեքսանդր Մանթաշյանցն է:

48-ամյա Տեր Նարեկ Ղուշչյանը Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանն ավարտելուց հետո ծառայության է անցել՝ որպես Վիրահայոց թեմի Ախալցիխեի շրջանի գյուղերի, այնուհետեւ՝ Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ, Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցիների եւ, ապա՝ Մառնեուլի եւ Ռուսթավի քաղաքների հայության հոգեւոր հովիվ:

*«Վրաստան» թերթը, ընթերցողները շնորհավորում են Տեր Նարեկ քահանա Ղուշչյանին նոր նշանակման առիթով, մաղթելով աստվածահաճո եւ արդյունաշատ առաքելություն:*

ՍՊՈՐՏ

## «ԵՎՐՈԲԱՍԿԵՏ 2022». ԵԶՐԱԳԻԾԸ ՀԱՏԵՑ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ «A» ԽՄԲԻ ՄՐՑԱՇԱՐԸ

### ՑԱՎՈՔ, ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ ԴՈՒՐՍ ՄՆԱՑ «ԵՎՐՈԲԱՍԿԵՏԻ» ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻՑ




Ինչպես արդեն հաղորդել ենք, սեպտեմբերի 1-ին Թբիլիսիի նորակառույց մարզապալատում մեկնարկեց բասկետբոլի Եվրոպայի առաջնության «A» խմբի մրցաշարը, որի արդյունքներով վեց թիմերից առաջին չորս տեղերը զբաղեցրած հավաքականները Գերմանիայում շարունակելու են մրցապայքարը մայրցամաքի ուժեղագույնի կոչման համար:

Ցավոք, Վրաստանի հավաքականը խմբային մրցաշարում շահելով մեկ հանդիպումը, հինգում պարտվեցին եւ դուրս մնացին առաջնությունից: «A» խմբում փլեյ-ֆոում հանդես գալու ուղեգրերը 8-ական միավորով նվաճեցին (ըստ մրցաշարային աղյուսակի) Իսպանիայի, Թուրքիայի, Մոնտենեգրոյի եւ Բելգիայի հավաքականները: Ընդհանուր 6-ական միավորով աղյուսակը եզրափակեցին Բուլղարիայի եւ Վրաստանի թիմերը:

Նշենք, որ մրցաշարում Վրաստանի թիմը երկու օվերթայմով 88:83 հաշվով պարտության մատնեց խմբի առաջատարներից մեկին՝ Թուիրքիայի հավաքականին: Ընդ որում, հանդիպման ավարտին Թուրքիայի հավաքականի գլխավոր մարզիչ Էրգին Աթամանի՝ վարքն ու հայտարարությունները սկանդալի պատճառ դարձան, ինչին ի պատասխան՝ Վրաստանի բասկետբոլի ֆեդերացիան հանդես եկավ հատուկ հայտարարությամբ:

Նշենք, որ Բասկետբոլի միջազգային ֆեդերացիան (FIBA) հրաժարվեց բավարարել Վրաստան-Թուրքիա հանդիպումը վիճելի հայտարարելու պահանջը:

## ՖՈՒՏԲՈԼ. ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐԸ ՊԱՀՊԱՆԵՑԻՆ ԻՐԵՆՑ ԴԻՐՔԵՐԸ

***Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց հավաքականների վարկանիշային նոր աղյուսակը, ըստ որի՝ Վրաստանի եւ Հայաստանի հավաքականները պահպանեցին իրենց դիրքերը, համապատասխանաբար, զբաղեցնելով 82-րդ եւ 92-րդ հորիզոնականները:***

Ինչ վերաբերում է վարկանիշային նոր աղյուսակի առաջատարներին, ապա առաջին հորիզոնականը զբաղեցնում է Բրազիլիայի հավաքականը: Նրան հաջորդում են Բելգիայի, Արգենտինայի, Ֆրանսիայի, Անգլիայի, Իսպանիայի, Իտալիայի, Նիդերլանդների, Պորտուգալիայի, Դանիայի հավաքականները:

## ԽԱՉԲԱՌ



**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 6.Քաղաքատիպ ավան Ուկրաինայում: 8.Օրվա մաս: 10.Ստեղծագործություն՝ թատրոնում բեմադրվելու նպատակով: 11.Քաղաք Ադրբեջանում: 13.Խոշոր երկկենցաղ կենդանի: 15.Բամբասանք: 17.«Շարժական» բնակարան: 18.Առասան, պարան: 19.Մտերիմ, համախոհ: 21.Միամյա հացաբույս: 22.Ծեծ, ծաղկանք: 23.Կիսատ, ոչ լրիվ: 27.Անորոշ դերբայ: 29.Հայոց թագուհի, Արտաշեսյան արքայատոհմի վերջին գահակալը: 32.Դեռ, առաջ: 33.Հայերենի կետադրական նշաններից: 35.Ջրլող թռչուն: 36.Հացահատիկային կուլտուրա: 37.Հունգարացի կոմպոզիտոր եւ դաշնակահար Ֆերենց ...: 39.Վսեմ, հպարտ: 42.Հզորության չափման միավոր ՍԻ համակարգում: 44.Արաբ կնոջ անուն: 46.Կերակրատեսակ: 49.Զգացողություն: 50.Անմասն, անհաղորդ: 53.Ադամի եւ Եվայի որդիներից: 54.Կենդանակերպի նշան: 55.Կարատեի աստիճան: 56.Անտեղի: 57.Վաղեմի, նախկին: 58.Ֆրանսիացի դերասան Ժան ...: 59.Անփորձ (բրբ.): 60.Օվկիանոսի, ծովի կամ լճի՝ ցամաքի մեջ մտած մաս: 61.Մարդու ձեռքի մաս:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 1.Նոտա: 2.Ռուս սցենարիստ Արկադի ...: 3.Հռոմեական Իմպերատոր Հուլիոս ...: 4.Դժոխք: 5.Կականոյից եւ շաքարից պատրաստվող քաղցրավենիք: 7.Պաշտպան, սատար: 9.Վրեժով լցված երդվյալ թշնամի: 12.XII դարի հայ գիտնական, բժիշկ ... Սեբաստացի: 14.Գլխի կմախք: 16.Չարք: 20.Քիմիական տարր: 24.Խնձորի տեսակ: 25.Նահանգ ԱՄՆ-ում: 26.Անտառի ելակ: 28.Անգույն հեղուկ, ջրածնի ու թթվածնի միացում: 30.Ժամի 60-րդ մասը: 31.Տանիքը ծածկելու նյութ: 33.Գնչու: 34.Փայտե մահճակալ: 38.Մեծ ընդարձակ սենյակ: 40.Բնության ահեղ երեւույթներից: 41.Ճապոնական ավանդական հագուստ: 42.Խաղողի տնկի: 43.Ալբանիայի մայրաքաղաքը: 45.Տխրություն, կսկիծ: 47.Վրացիների ենթազգային (ազգագրական) խումբ: 48.Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախկին նախարար ... Քոբալիա: 51.Դրախտ: 52.Դունչ, չանա:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 1.Հեքիմյան: 5.Լեյլա: 10.Սար: 11.Մութ: 12.Ասլան: 14.Իվետա: 17.Մով: 18.Ինարա: 19.Կազան: 20.Ասա: 21.Արոր: 22.Սան: 24.Սամվել: 25.Դալար: 28.Ափ: 29.Ամառ: 30.Անի: 31.Լյա: 33.Ականապատ: 36.Արզնի: 37.Աբել: 38.Աներեր: 39.Նար: 41.Տարի: 42.Ամ: 43.Եկեք: 47.Ալանի: 48.Արբատ: 49.Քավարան: 50.Պաս:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 1.Հասմիկ: 2.Քարտեզ: 3.Մամյան: 4.Ախթամար: 6.Եսենին: 7.Լեզվաբան: 8.Լալվար: 9.Լուսամփոփի: 13.Սոսո: 15.Վարդանյան: 16.Տաթեւ: 21.Առլեկին: 22.Սառա: 23.Ար: 25.Դանթե: 26.Ամա: 27.Լապաաա: 28.Անդերսեն: 32.Արեն: 33.Աներ: 34.Տարիել: 36.Զրահ: 38.Ավանակ: 40.Հարավ: 41.Տավար: 44.Կարպ: 45.Քիրս: 46.Ոտք: 47.ԱՄՆ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445